



## **Եվրոպայի խորհրդի պայմանագրերի շարք – N 201**

**Սեռական շահագործումից և սեռական բնույթի բռնություններից երեխաների պաշտպանության մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիա**

Լանզարոտ, 25.X.2007

## Նախաբան

Եվրոպայի խորհրդի անդամ պետությունները և մյուս ստորագրող կողմերը,

համարելով, որ Եվրոպայի խորհրդի նպատակն է հասնել իր անդամների միջև ավելի մեծ միասնության,

համարելով, որ յուրաքանչյուր երեխա, որպես անչափահաս, իրավունք ունի օգտվելու իր ընտանիքի, հասարակության և պետության կողմից նախատեսվող պաշտպանության միջոցներից,

դիտարկելով, որ երեխաների սեռական շահագործումը, մասնավորապես երեխաների պոռնկագրությունը և մարմնավաճառությունը, ինչպես նաև երեխաների սեռական չարաշահման բոլոր ձևերը, այդ թվում արտերկրում կատարված գործողությունները, կործանիչ են երեխայի առողջության և հոգեբանական ու սոցիալական զարգացման համար,

դիտարկելով, որ երեխաների սեռական շահագործումը և չարաշահումը հասնում են անհանգստացնող չափերի ազգային և միջազգային մակարդակով, մասնավորապես երեխաների և հանցագործների կողմից տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների (S<S) ավելի կիրառման ավելացման մասով, և որ երեխաների այդպիսի սեռական շահագործման և չարաշահման կանխարգելումն ու դրանց դեմ պայքարը պահանջում են միջազգային մակարդակով համագործակցություն,

հաշվի առնելով, որ երեխաների բարեկեցությունն ու շահերը բոլոր անդամ պետությունների համար հիմնարար արժեքներ են և պետք է խթանել դրանք առանց խտրականության,

վկայակոչելով Եվրոպայի խորհրդի պետությունների և կառավարությունների ղեկավարների 3-րդ գագաթնաժողովում ընդունված Գործողության ծրագիրը (Վարշավա, 2005 թվականի մայիսի 16-17), որը կոչ է անում մշակել միջոցառումներ՝ դադարեցնելու երեխաների սեռական շահագործումը,

վկայակոչելով, մասնավորապես, «Երեխաների և երիտասարդների սեռական շահագործման, պոռնկագրության և մարմնավաճառության, ինչպես նաև առևտրի վերաբերյալ» Նախարարների կոմիտեի թիվ R(91)11 առաջարկությունը, «Սեռական շահագործումից երեխաների պաշտպանության մասին» թիվ Rec(2001)16 առաջարկությունը և «Կիբեռհանցագործությունների մասին» կոնվենցիան (ETS No. 185), հատկապես դրա 9-րդ հոդվածը, ինչպես նաև «Մարդկանց առևտրի դեմ պայքարի մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիան (CETS No. 197),

նկատի ունենալով «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիան (1950, ETS No. 5), վերանայված Եվրոպական սոցիալական խարտիան (1996, ETS No. 163) և «Երեխաների իրավունքների իրականացման մասին» Եվրոպական կոնվենցիան (1996, ETS No. 160),

նկատի ունենալով նաև «Երեխայի իրավունքների մասին» Միավորված ազգերի կազմակերպության կոնվենցիան, հատկապես դրա 34-րդ հոդվածը, «Մանկավաճառության, երեխաների մարմնավաճառության և պոռնկագրության մասին» կամընտիր արձանագրությունը, «Մարդկանց, հատկապես կանանց և երեխաների առևտուրը կանխարգելելու, դրա դեմ պայքարելու և պատժելու մասին» արձանագրությունը, որով լրացումներ են կատարվում «Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ պայքարի մասին» Միավորված ազգերի կազմակերպության կոնվենցիայում, ինչպես նաև «Մանկական աշխատանքի վատթարագույն ձևերի արգելման ու վերացման ուղղությամբ անհետաձգելի գործողությունների մասին» Աշխատանքի միջազգային կազմակերպության կոնվենցիան,

հաշվի առնելով «Երեխաների սեռական շահագործման և մանկական պոռնկագրության դեմ պայքարի մասին» Եվրոպական միության Խորհրդի շրջանակային որոշումը (2004/68/JHA), «Քրեական վարույթներում տուժողի դատավարական իրավունակության մասին» Եվրոպական միության Խորհրդի շրջանակային որոշումը (2001/220/JHA) և «Մարդկանց առևտրի դեմ պայքարի մասին» Եվրոպական միության Խորհրդի շրջանակային որոշումը (2002/629/JHA),

պատշաճ կերպով հաշվի առնելով այս ոլորտի մյուս համապատասխան միջազգային փաստաթղթերը և ծրագրերը, հատկապես՝ Առևտրային նպատակներով երեխաների սեռական շահագործման դեմ Համաշխարհային առաջին կոնգրեսի կողմից ընդունված Ստոկհոլմի հռչակագիրը և գործողությունների ծրագիրը (27-31 օգոստոսի, 1996թ.), Առևտրային նպատակներով երեխաների սեռական շահագործման դեմ Համաշխարհային երկրորդ կոնգրեսի կողմից ընդունված Յոկոհամայի գլոբալ պարտավորությունը (17-20-ը դեկտեմբերի, 2001թ.), Առևտրային նպատակներով երեխաների սեռական շահագործման դեմ Համաշխարհային երկրորդ կոնգրեսի նախապատրաստական խորհրդաժողովի ժամանակ ընդունված Բուդապեշտի պարտավորությունը և գործողությունների ծրագիրը (20-21-ը նոյեմբերի, 2001թ.), «Երեխաներին հարմար աշխարհի ստեղծման մասին» Միավորված ազգերի կազմակերպության գլխավոր ասամբլեայի թիվ S-27/2 բանաձևը և Միավորված ազգերի կազմակերպության երրորդ գագաթնաժողովից հետո ընդունված և Մոնակոյի խորհրդաժողովով

մեկնարկած (4-5-ը ապրիլի, 2006թ.) «Կառուցել Եվրոպան երեխաների համար և երեխաների հետ» եռամյա ծրագիրը,

հաստատական լինելով արդյունավետորեն նպաստել սեռական շահագործումից և չարաշահումից երեխաների պաշտպանության համընդհանուր նպատակին՝ անկախ այն հանգամանքից, թե ով է հանցագործություն կատարողը, ինչպես նաև նպաստել տուժողներին օժանդակության տրամադրման համընդհանուր նպատակին,

հաշվի առնելով երեխաների սեռական շահագործման և չարաշահման բոլոր ձևերի դեմ պայքարի կանխարգելիչ, պաշտպանիչ և քրեական իրավունքի ասպեկտները կարգավորող և հստակ մշտադիտարկման մեխանիզմ սահմանող համապարփակ միջազգային փաստաթղթի մշակման անհրաժեշտությունը,

համաձայնեցին հետևյալի մասին.

## **Գլուխ 1. Նպատակները, խտրականության բացառման սկզբունքը և սահմանումները**

### **Հոդված 1. Նպատակները**

- 1 Կոնվենցիայի նպատակներն են՝
  - ա) երեխաների սեռական շահագործման և չարաշահման կանխարգելումը և դրանց դեմ պայքարը,
  - բ) սեռական շահագործումից և չարաշահումից տուժած երեխաների իրավունքների պաշտպանությունը,
  - գ) երեխաների սեռական շահագործման և չարաշահման դեմ ներպետական և միջազգային համագործակցության խթանումը:
- 2 Ապահովելու համար Կողմերի կողմից Կոնվենցիայի դրույթների արդյունավետ կիրարկումը, սույն Կոնվենցիայով ստեղծվում է հատուկ մշտադիտարկման մեխանիզմ:

### **Հոդված 2. Խտրականության բացառման սկզբունքը**

Սույն Կոնվենցիայի դրույթների կիրարկումը Կողմերի կողմից, մասնավորապես տուժողների իրավունքների պաշտպանության նպատակով միջոցառումների իրականացումը, երաշխավորվում է առանց որևէ հիմքով խտրականության, ինչպիսիք են՝ սեռը, ռասան, մաշկի գույնը, լեզուն, կրոնը, քաղաքական կամ այլ համոզմունքները, ազգային

կամ սոցիալական ծագումը, ազգային փոքրամասնության պատկանելությունը, գույքային դրությունը, ծնունդը, սեռական կողմնորոշումը, առողջական վիճակը, արատները կամ այլ հանգամանքեր:

### **Հոդված 3. Սահմանումները**

Սույն Կոնվենցիայի նպատակներով՝

- ա) «երեխա» նշանակում է 18 տարին չլրացած ցանկացած անձ,
- բ) «երեխաների սեռական շահագործում և չարաշահում» ներառում է սույն Կոնվենցիայի 18–23-րդ հոդվածներում սահմանված վարքագիծը,
- գ) «տուժող» նշանակում է սեռական շահագործման կամ չարաշահման ենթարկված անձ:

## **Գլուխ II. Կանխարգելիչ միջոցները**

### **Հոդված 4. Սկզբունքները**

Յուրաքանչյուր Կողմ ձեռնարկում է անհրաժեշտ օրենսդրական կամ այլ միջոցներ՝ երեխաների սեռական շահագործման ու չարաշահման բոլոր ձևերը կանխարգելելու և երեխաներին պաշտպանելու համար:

### **Հոդված 5. Երեխաների հետ աշխատող անձանց աշխատանքի ընդունումը, վերապատրաստումը և իրազեկության բարձրացումը**

- 1 Յուրաքանչյուր Կողմ ձեռնարկում է անհրաժեշտ օրենսդրական կամ այլ միջոցներ՝ կրթական, առողջապահության, սոցիալական պաշտպանության, դատական և իրավապահ, ինչպես նաև սպորտի, մշակույթի և հանգստի ոլորտներում երեխաների հետ պարբերաբար շփում ունեցող անձանց շրջանում երեխաների պաշտպանության և իրավունքների մասին իրազեկությունը խթանելու համար:
- 2 Յուրաքանչյուր Կողմ ձեռնարկում է անհրաժեշտ օրենսդրական կամ այլ միջոցներ՝ ապահովելու, որ 1-ին պարբերությունում նշված անձինք ունենան երեխաների սեռական շահագործման և չարաշահման, դրանց բացահայտման միջոցների և 12-րդ հոդվածի 1-ին պարբերությունում նշված հնարավորության վերաբերյալ համապատասխան գիտելիքներ:
- 3 Յուրաքանչյուր Կողմ ձեռնարկում է անհրաժեշտ օրենսդրական կամ այլ միջոցներ՝ իր ներպետական իրավունքին համապատասխան

ապահովելու, որ երեխաների հետ պարբերաբար շփումներ ենթադրող մասնագիտություններն ստանալու պայմաններով ապահովվեն, որ այս մասնագիտություններն ստանալու թեկնածուները դատապարտված չեն եղել երեխաների սեռական շահագործման կամ չարաշահման համար:

#### **Հոդված 6. Երեխաների կրթությունը**

Յուրաքանչյուր Կողմ ձեռնարկում է անհրաժեշտ օրենսդրական կամ այլ միջոցներ՝ ապահովելու համար, որ երեխաները տարրական և միջնակարգ կրթության ընթացքում ստանան սեռական շահագործման ու չարաշահման հետ կապված վտանգների, ինչպես նաև ինքնապաշտպանության միջոցների մասին տեղեկություններ, որոնք հարմարեցված են նրանց զարգացող կարողություններին: Անհրաժեշտության դեպքում, պետք է ծնողների հետ համագործակցությամբ տրամադրված այդ տեղեկությունները տրվեն սեռական բնույթի հարցերի վերաբերյալ տեղեկատվության առավել լայն համատեքստում և հատուկ ուշադրություն դարձվի վտանգավոր, հատկապես նոր տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների օգտագործման հետ կապված իրավիճակներին:

#### **Հոդված 7. Կանխարգելիչ միջամտության ծրագրերը կամ միջոցառումները**

Յուրաքանչյուր Կողմ ապահովում է, որ այն անձինք, ովքեր մտավախություն ունեն, որ կարող են կատարել սույն Կոնվենցիայով նախատեսված հանցագործություններից որևէ մեկը, անհրաժեշտության դեպքում, կարողանան մասնակցել միջամտության ծրագրերին կամ միջոցառումներին, որոնք նախատեսված են գնահատելու և կանխարգելելու կատարվող հանցագործությունների ռիսկը:

#### **Հոդված 8. Լայն հասարակության համար միջոցառումները**

- 1 Յուրաքանչյուր Կողմ խթանում կամ իրականացնում է իրազեկության բարձրացմանն ուղղված արշավներ լայն հասարակության համար՝ տրամադրելով երեխաների սեռական շահագործման և չարաշահման երևույթի, ինչպես նաև հնարավոր ձեռնարկվելիք կանխարգելիչ միջոցների վերաբերյալ տեղեկություններ:
- 2 Յուրաքանչյուր Կողմ ձեռնարկում է օրենսդրական կամ այլ միջոցներ, որոնք անհրաժեշտ են կանխարգելելու կամ արգելելու համար սույն Կոնվենցիայով նախատեսված հանցագործությունները գովազդող նյութերի տարածումը:

### **Հոդված 9. Երեխաների, մասնավոր հատվածի, լրատվամիջոցների և քաղաքացիական հասարակության մասնակցությունը**

- 1 Յուրաքանչյուր Կողմ խրախուսում է երեխաների մասնակցությունը, համաձայն իրենց զարգացման կարողությունների, երեխաների սեռական շահագործման և չարաշահման դեմ պայքարին ուղղված պետական քաղաքականության, ծրագրերի և կամ այլ նախաձեռնությունների իրականացումը:
- 2 Յուրաքանչյուր Կողմ խրախուսում է պետական քաղաքականության մշակման և իրականացման գործընթացում մասնավոր հատվածի, մասնավորապես տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների ոլորտի, զբոսաշրջության և ճանապարհորդության, արդյունաբերության և բանկային ու ֆինանսական հատվածների, ինչպես նաև քաղաքացիական հասարակության մասնակցությունը երեխաների սեռական շահագործումը և չարաշահումը կանխարգելելու և ներքին նորմերը ինքնակարգավորումների կամ համատեղ կարգավորումների միջոցով կիրարկելու նպատակով:
- 3 Յուրաքանչյուր Կողմ խրախուսում է լրատվամիջոցների կողմից երեխաների սեռական շահագործման և չարաշահման բոլոր ասպեկտներին վերաբերող համապատասխան տեղեկատվության տրամադրումը՝ պատշաճ կերպով պահպանելով լրատվամիջոցների անկախությունը և մամուլի ազատությունը:
- 4 Յուրաքանչյուր Կողմ խրախուսում է քաղաքացիական հասարակության կողմից իրականացվող երեխաների սեռական շահագործման և չարաշահման կանխարգելմանը և երեխաների պաշտպանությանը նպատակաուղղված ծրագրերի ֆինանսավորումը՝ անհրաժեշտության դեպքում հիմնադրամներ ստեղծելու միջոցով:

### **Գլուխ III. Մասնագիտացված և համակարգող մարմինները**

#### **Հոդված 10. Ազգային մակարդակով ձեռնարկվող համակարգման և համագործակցության միջոցները**

- 1 Յուրաքանչյուր Կողմ ձեռնարկում է միջոցներ, որոնք անհրաժեշտ են՝ ազգային կամ տեղական մակարդակով տարբեր գործակալությունների համակարգումն ապահովելու համար, որոնք զբաղվում են սեռական շահագործումից և չարաշահումից երեխաների պաշտպանության, դրանց կանխարգելման և դրանց դեմ պայքարի հարցերով, հատկապես կրթության, առողջապահության, սոցիալական ծառայությունների ոլորտներում, ինչպես նաև իրավապահ և դատական մարմիններում:

- 2 Յուրաքանչյուր Կողմ ձեռնարկում է անհրաժեշտ օրենսդրական կամ այլ միջոցներ՝ ստեղծելու կամ նշանակելու.

ա) անկախ իրավասու ազգային կամ տեղական կառույցներ՝ երեխաների իրավունքներին աջակցելու և դրանք պաշտպանելու համար՝ ապահովելով, որ այդ կառույցներն հատուկ միջոցներով և պարտականություններով օժտված լինեն,

բ) ազգային կամ տեղական մակարդակներով և քաղաքացիական հասարակության հետ համագործակցությամբ տվյալների հավաքագրման մեխանիզմներ կամ կիզակետեր՝ երեխաների սեռական շահագործման և չարաշահման երևույթը դիտարկելու և գնահատելու նպատակով՝ պատշաճ կերպով պահպանելով անձնական տվյալների պաշտպանության պահանջները:

- 3 Յուրաքանչյուր Կողմ խրախուսում է իրավասու պետական մարմինների, քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի միջև համագործակցությունը՝ երեխաների սեռական շահագործումը և չարաշահումը առավել արդյունավետորեն կանխարգելելու և դրանց դեմ պայքարելու համար:

## **Գլուխ IV. Պաշտպանական միջոցները և տուժողներին աջակցելը**

### **Հոդված 11. Սկզբունքները**

- 1 Յուրաքանչյուր Կողմ ստեղծում է արդյունավետ սոցիալական ծրագրեր և բազմաբնույթ կառույցներ՝ տուժողներին, նրանց մերձավորներին և նրանց խնամքի համար պատասխանատու ցանկացած անձի անհրաժեշտ աջակցություն տրամադրելու համար:
- 2 Յուրաքանչյուր Կողմ ձեռնարկում է անհրաժեշտ օրենսդրական կամ այլ միջոցներ՝ ապահովելու համար, որ եթե տուժողի տարիքը հայտնի չէ և հիմքեր կան ենթադրելու, որ տուժողը երեխա է, երեխաներին հատկացվող պաշտպանության և աջակցության միջոցները համաձայնեցվեն տուժողի հետ մինչև նրա տարիքը պարզելը:

### **Հոդված 12. Սեռական շահագործման կամ չարաշահման վերաբերյալ կասկածների մասին հայտները**

- 1 Յուրաքանչյուր Կողմ ձեռնարկում է անհրաժեշտ օրենսդրական կամ այլ միջոցներ՝ ապահովելու համար, որ իր ներպետական իրավունքով սահմանված գաղտնիության կանոնները, որոնք կիրառվում են երեխաների հետ աշխատող որոշակի մասնագետների նկատմամբ,

չխոչընդոտեն այդ մասնագետների՝ երեխայի համար պատասխանատու ծառայություններին տեղեկություններ տրամադրելու հնարավորությանը՝ այն դեպքերում, երբ բավարար հիմքեր կան ենթադրելու, որ երեխան սեռական շահագործման կամ չարաշահման զոհ է:

- 2 Յուրաքանչյուր Կողմ ձեռնարկում է անհրաժեշտ օրենսդրական կամ այլ միջոցներ՝ խրախուսելու համար, որ ցանկացած անձ, ով տեղյակ է կամ կասկածում է, բարեխղճորեն, երեխաների սեռական շահագործման կամ չարաշահման մասին, հայտնի այդ փաստերը իրավասու ծառայություններին:

### **Հոդված 13. Թեժ գծերը**

Յուրաքանչյուր Կողմ ձեռնարկում է անհրաժեշտ օրենսդրական կամ այլ միջոցներ՝ խրախուսելու և աջակցելու տեղեկատվական ծառայությունների՝ հեռախոսային կամ ինտերնետային օգնության թեժ գծերի ստեղծմանը՝ զանգահարողներին խորհրդատվություն տրամադրելու համար՝ նույնիսկ գաղտնիության պայմանով կամ պատշաճ կերպով հաշվի առնելով նրանց անանունությունը:

### **Հոդված 14. Տուժողներին աջակցելը**

- 1 Յուրաքանչյուր Կողմ ձեռնարկում է անհրաժեշտ օրենսդրական կամ այլ միջոցներ՝ կարճաժամկետ և երկարաժամկետ կտրվածքով աջակցելու համար տուժողների ֆիզիկական և հոգեբանական ու սոցիալական վերականգնմանը: Սույն պարբերության համաձայն ձեռնարկված միջոցների շրջանակներում պետք է պատշաճ կերպով հաշվի առնել երեխաների կարծիքը, կարիքները և մտահոգությունները:
- 2 Յուրաքանչյուր Կողմ ձեռնարկում է միջոցներ, իր ներպետական իրավունքով նախատեսված պայմանների ներքո, տուժողներին օգնելու հարցում ներգրավված հասարակական կազմակերպությունների, այլ համապատասխան կազմակերպությունների կամ քաղաքացիական հասարակության այլ տարրերի հետ համագործակցելու համար:
- 3 Եթե ծնողները կամ երեխաներին խնամող անձինք ներգրավված են նրա սեռական շահագործման կամ չարաշահման մեջ, 11-րդ հոդվածի 1-ին պարբերությունով նախատեսված միջամտության ընթացակարգերն ընդգրկում են՝
  - ենթադրյալ հանցագործություն կատարողի հեռացման հնարավորությունը.

- տուժողին նրա ընտանեկան միջավայրից հեռացնելու հնարավորությունը: Նման հեռացման պայմաններն ու տևողությունը սահմանվում են՝ երեխայի շահերից ելնելով:
- 4 Յուրաքանչյուր Կողմ ձեռնարկում է անհրաժեշտ օրենսդրական կամ այլ միջոցներ՝ ապահովելու համար, որ տուժողի հետ սերտ կապի մեջ գտնվող անձինք կարողանան անհրաժեշտության դեպքում օգտվել թերապևտիկ օգնությունից, հատկապես անհետաձգելի հոգեբանական աջակցությունից:

## **Գլուխ V. Միջամտության ծրագրերը կամ միջոցառումները**

### **Հոդված 15. Ընդհանուր սկզբունքներ**

- 1 Յուրաքանչյուր Կողմ, իր ներպետական իրավունքի համաձայն, ապահովում կամ խթանում է 16-րդ հոդվածի 1-ին և 2-րդ պարբերություններում նշված անձանց համար արդյունավետ միջամտության ծրագրերը կամ միջոցառումները՝ երեխաների դեմ սեռական բնույթի հանցագործությունների կրկնման ռիսկերը կանխարգելելու կամ նվազագույնի հասցնելու նպատակով: Նման ծրագրերը կամ միջոցառումները պետք է հասանելի լինեն վարույթի ընթացքում ցանկացած պահի, բանտից դուրս և ներս՝ ներպետական իրավունքով սահմանված պայմանների համաձայն:
- 2 Յուրաքանչյուր Կողմ, իր ներպետական իրավունքի համաձայն, ապահովում կամ խթանում է իրավասու մարմինների, մասնավորապես առողջապահական ծառայությունների և դատական մարմինների, ինչպես նաև 16-րդ հոդվածի 1-ին և 2-րդ պարբերություններում նշված անձանց համար պատասխանատու այլ մարմինների միջև գործընկերության կամ համագործակցության այլ ձևերի զարգացումը:
- 3 Յուրաքանչյուր Կողմ, իր ներպետական իրավունքի համաձայն, գնահատում է սույն Կոնվենցիայով սահմանված 16-րդ հոդվածի 1-ին և 2-րդ պարբերություններում նշված անձանց կողմից հանցագործությունների կրկնման վտանգավոր և հնարավոր ռիսկերը՝ համապատասխան ծրագրեր կամ միջոցներ նախանշելու նպատակով:
- 4 Յուրաքանչյուր Կողմ, իր ներպետական իրավունքի համաձայն, գնահատում է իրականացված ծրագրերի և միջոցառումների արդյունավետությունը:

## **Հոդված 16. Միջամտության ծրագրերի կամ միջոցառումների շահառուները**

- 1 Յուրաքանչյուր Կողմ, իր ներպետական իրավունքի համաձայն, ապահովում է, որ սույն Կոնվենցիայով նախատեսված հանցագործություններից որևէ մեկի համար քրեական վարույթում ընդգրկված անձինք, կարողանան մասնակցել 15-րդ հոդվածի 1-ին պարբերությունում նշված ծրագրերին կամ միջոցառումներին այն պայմաններով, որոնք ոչ վնաս են հասցնում, ոչ էլ հակասում են պաշտպանության իրավունքներին և արդար ու անաչառ դատավարության պահանջներին՝ և մասնավորապես պատշաճ կերպով պահպանելով անմեղության կանխավարկածի սկզբունքը կարգավորող կանոնները:
- 2 Յուրաքանչյուր Կողմ, իր ներպետական իրավունքի համաձայն, ապահովում է, որ սույն Կոնվենցիայով նախատեսված հանցագործություններից որևէ մեկի համար դատապարտված անձինք կարողանան մասնակցել 15-րդ հոդվածի 1-ին պարբերությունում նշված ծրագրերին կամ միջոցառումներին:
- 3 Յուրաքանչյուր Կողմ, իր ներպետական իրավունքի համաձայն, ապահովում է, որ միջամտության ծրագրերն ու միջոցառումները մշակվեն կամ հարմարեցվեն այնպես, որ բավարարեն սեռական բնույթի հանցագործություններում ընդգրկված երեխաների՝ ներառյալ քրեական պատասխանատվության ենթարկվելու համար սահմանված տարիքից ցածր գտնվողների զարգացման կարիքները՝ նրանց սեռական վարքագծի հետ կապված խնդիրները հասցեագրելու նպատակով:

## **Հոդված 17. Տեղեկատվությունը և համաձայնությունը**

- 1 Յուրաքանչյուր Կողմ, իր ներպետական իրավունքի համաձայն, ապահովում է, որ 16-րդ հոդվածում նշված անձինք, ում առաջարկվել են միջամտության ծրագրերը կամ միջոցառումները, ամբողջությամբ տեղեկացված լինեն առաջարկի պատճառների մասին և համաձայն լինեն ծրագրին կամ միջոցառմանը՝ ամբողջությամբ իրազեկ լինելով փաստերի մասին:
- 2 Յուրաքանչյուր Կողմ, իր ներպետական իրավունքի համաձայն, ապահովում է, որ այն անձինք, որոնց առաջարկվել է մասնակցել միջամտության ծրագրերին կամ միջոցառումներին, կարողանան հրաժարվել դրանցից, իսկ դատապարտված անձանց դեպքում, իրազեկվել դրանցից հրաժարման հնարավոր հետևանքների մասին:

## **Գլուխ VI. Նյութական քրեական իրավունքը**

### **Հոդված 18. Սեռական չարաշահումը**

- 1 Յուրաքանչյուր Կողմ ձեռնարկում է անհրաժեշտ օրենսդրական կամ այլ միջոցներ՝ ապահովելու համար, որ քրեականացվեն հետևյալ կանխամտածված արարքները.

ա) այն երեխայի հետ սեռական հարաբերությունների մեջ ներգրավվելը, ով ներպետական իրավունքի դրույթների համաձայն, չի հասել սեռական հարաբերությունների համար նախատեսված օրենքով սահմանված տարիքին,

բ) երեխայի հետ սեռական հարաբերությունների մեջ ներգրավվելը, եթե

- գործադրվել է պարտադրանք, ուժ, կամ սպառնալիք
- ոտնձգությունն է արվել՝ երեխայի նկատմամբ վստահության, իշխանության կամ ներազդեցության ճանաչված դիրքի օգտագործմամբ՝ ներառյալ ընտանիքում, կամ
- ոտնձգությունը կատարվել է օգտվելով երեխայի խոցելի իրավիճակից, հատկապես մտավոր կամ ֆիզիկական արատների կամ կախյալ վիճակից:

- 2 Վերը նշված 1-ին պարբերության նպատակով՝ յուրաքանչյուր Կողմ որոշում է այն տարիքը, երբ արգելվում է մտնել երեխայի հետ սեռական հարաբերությունների մեջ:
- 3 1-ին պարբերության դրույթները նախատեսված չեն անչափահասների միջև փոխադարձ համաձայնությամբ սեռական հարաբերությունների կարգավորման համար:

### **Հոդված 19. Երեխայի մարմնավաճառության հետ կապված հանցագործությունները**

- 1 Յուրաքանչյուր Կողմ ձեռնարկում է անհրաժեշտ օրենսդրական կամ այլ միջոցներ՝ ապահովելու համար հետևյալ կանխամտածված արարքների քրեականացումը՝

ա) երեխային մարմնավաճառության մեջ ներգրավվելը կամ երեխային մարմնավաճառության դրդելը.

բ) երեխային մարմնավաճառության հարկադրելը կամ դրանից շահույթ ստանալը կամ նման նպատակներով երեխային այլ կերպ շահագործելը.

գ) երեխաների մարմնավաճառությանն օժանդակելը:

- 2 Սույն հոդվածի նպատակներով՝ «երեխաների մարմնավաճառություն» նշանակում է երեխայի օգտագործումը սեռական բնույթի գործունեության մեջ վարձատրության կամ ցանկացած այլ տեսակի հատուցման դիմաց՝ անկախ այդ վճարը, խոստումը կամ հատուցումը կատարվում է երեխային, թե երրորդ անձին:

## **Հոդված 20. Մանկական պոռնկագրության հետ կապված հանցագործությունները**

- 1 Յուրաքանչյուր Կողմ ձեռնարկում է անհրաժեշտ օրենսդրական կամ այլ միջոցներ՝ ապահովելու համար առանց իրավունքի կատարված հետևյալ կանխամտածված արարքների քրեականացումը՝

ա) մանկական պոռնկագրություն արտադրելը.

բ) մանկական պոռնկագրություն առաջարկելը կամ մատչելի դարձնելը.

գ) մանկական պոռնկագրություն տարածելը կամ հեռարձակելը.

դ) սեփական նպատակներով կամ այլ անձի համար մանկական պոռնկագրություն ձեռք բերելը.

ե) մանկական պոռնկագրություն տնօրինելը.

զ) տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների միջոցով գիտակցաբար մանկական պոռնկագրություն մուտքի հնարավորություն ձեռք բերելը:

- 2 Սույն հոդվածի նպատակներով՝ «երեխաների պոռնկագրություն» նշանակում է որևէ նյութ, որը տեսողական ձևով արտացոլում է երեխային իրական կամ մոդելավորված բացահայտ սեռական գործողություններ կամ երեխայի սեռական օրգանների ցանկացած ցուցադրում գլխավորապես սեռական նպատակներով:

- 3 Յուրաքանչյուր Կողմ կարող է իրեն իրավունք վերապահել ամբողջությամբ կամ մասամբ չկիրառելու 1.ա և ե պարբերությունները պոռնկագրական նյութերի արտադրության կամ տնօրինման նկատմամբ, որոնք

- բաղկացած են բացառապես մոդելավորված ներկայացումներից կամ իրականում գոյություն չունեցող երեխայի իրական պատկերներից,
  - ընդգրկում են երեխաների, ովքեր հասել են 18-րդ հոդվածի 2-րդ պարբերությունում նշված տարիքին, եթե այդ պատկերները արտադրվել են և տնօրինվում են նրանց կողմից իրենց համաձայնությամբ և միայն իրենց անձնական օգտագործման համար:
- 4 Յուրաքանչյուր Կողմ կարող է իրեն իրավունք վերապահել ամբողջությամբ կամ մասամբ չկիրառելու 1.գ պարբերությունը:

**Հոդված 21. Պոռնկագրական բնույթի գործողություններում երեխաների մասնակցության հետ կապված հանցագործությունները**

- 1 Յուրաքանչյուր Կողմ ձեռնարկում է անհրաժեշտ օրենսդրական կամ այլ միջոցներ՝ ապահովելու համար հետևյալ կանխամտածված արարքների քրեականացումը՝
- ա) պոռնկագրական բնույթի գործողություններում երեխաներին ներգրավելը կամ երեխաներին նման գործողությունների դրդելը.
  - բ) երեխաներին պոռնկագրական բնույթի գործողությունների հարկադրելը կամ դրանից շահույթ ստանալը կամ նման նպատակներով երեխային այլ կերպ շահագործելը.
  - գ) գիտակցաբար մասնակցել երեխաների մասնակցությամբ պոռնկագրական բնույթի գործողություններին:
- 2 Յուրաքանչյուր Կողմ իրավունք ունի սահմանափակելու 1.գ պարբերության կիրառումը, եթե երեխաներին ներգրավել են կամ ստիպել են մասնակցել պոռնկագրական բնույթի գործողություններում 1.ա կամ բ պարբերությանը համապատասխան:

**Հոդված 22. Երեխաների սեռական այլասերումը**

Յուրաքանչյուր Կողմ ձեռնարկում է անհրաժեշտ օրենսդրական կամ այլ միջոցներ՝ քրեականացնելու 18-րդ հոդվածի 2-րդ պարբերությունում նշված տարիքին չհասած երեխային սեռական նպատակներով սեռական չարաշահման կամ սեռական բնույթի գործողություններին ականատես լինելուն դրդելը՝ նույնիսկ առանց դրան մասնակցելու:

### **Հոդված 23. Երեխաներին սեռական բնույթի գործողություններին դրդելը**

Յուրաքանչյուր Կողմ ձեռնարկում է անհրաժեշտ օրենսդրական կամ այլ միջոցներ՝ քրեականացնելու և տեղեկատվական ու հաղորդակցական տեխնոլոգիաների միջոցով 18-րդ հոդվածի 2-րդ պարբերությունում սահմանված տարիքին չհասած երեխայի հետ հանդիպելու նպատակով չափահասի կողմից արված կանխամտածված առաջարկը՝ երեխայի նկատմամբ 18-րդ հոդվածի 1.ա պարբերությունում կամ 20-րդ հոդվածի 1.ա պարբերությունում սահմանված հանցագործություններից որևէ մեկի կատարման նպատակով, եթե տվյալ առաջարկին հետևել են նման հանդիպմանը հանգեցնող ֆիզիկական գործողություններ:

### **Հոդված 24. Աջակցությունը կամ հանցակցությունը և փորձը**

- 1 Յուրաքանչյուր Կողմ ձեռնարկում է անհրաժեշտ օրենսդրական կամ այլ միջոցներ՝ քրեականացնելու սույն Կոնվենցիայով նախատեսված՝ կանխամտածված կերպով հանցագործություններից որևէ մեկի կատարմանն օժանդակումը կամ հանցակցությունը:
- 2 Յուրաքանչյուր Կողմ ձեռնարկում է անհրաժեշտ օրենսդրական կամ այլ միջոցներ՝ քրեականացնելու սույն Կոնվենցիայով նախատեսված հանցագործությունները կանխամտածված կերպով կատարելու փորձերը:
- 3 Յուրաքանչյուր Կողմ կարող է իրեն իրավունք

ել ամբողջությամբ կամ մասամբ չկիրառելու 2-րդ պարբերությունը 20-րդ հոդվածի 1.բ, դ, ե և զ պարբերություններով, 21-րդ հոդվածի 1.գ պարբերությունով, 22-րդ և 23-րդ հոդվածներով նախատեսված հանցագործությունների նկատմամբ:

### **Հոդված 25. Իրավազորությունը**

- 1 Յուրաքանչյուր Կողմ ձեռնարկում է անհրաժեշտ օրենսդրական կամ այլ միջոցներ՝ սույն Կոնվենցիայով նախատեսված հանցագործություններից որևէ մեկի նկատմամբ իրավազորություն սահմանելու համար, եթե հանցագործությունը կատարվել է՝

- ա) իր տարածքում կամ
- բ) այդ Կողմի դրոշը կրող նավի վրա, կամ
- գ) այդ Կողմի օրենքների ներքո գրանցված ինքնաթիռում, կամ
- դ) իր քաղաքացիներից որևէ մեկի կողմից, կամ
- ե) անձի կողմից, որի բնակության վայրն իր տարածքում է:

- 2 Յուրաքանչյուր Կողմ ձգտում է ձեռնարկել անհրաժեշտ օրենսդրական կամ այլ միջոցներ՝ սույն Կոնվենցիայով նախատեսված հանցագործություններից որևէ մեկի նկատմամբ իրավազրկություն սահմանելու համար, եթե հանցագործությունը կատարվել է իր քաղաքացիներից որևէ մեկի կամ որևէ անձի նկատմամբ, ում բնակության վայրն իր տարածքում է:
- 3 Յուրաքանչյուր Կողմ, ստորագրման պահին կամ վավերացման, ընդունման, հաստատման կամ միանալու մասին փաստաթուղթն ի պահ հանձնելիս կարող է հանդես գալ Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարին ուղղված հայտարարությամբ, որ իրեն իրավունք է վերապահում չկիրառելու կամ կիրառելու, առանձնահատուկ դեպքերում կամ պայմաններում, սույն հոդվածի 1.ե պարբերությունով նախատեսված իրավազրկության մասին կանոնները:
- 4 Սույն Կոնվենցիայի 18-րդ, 19-րդ, 20-րդ հոդվածների 1.ա պարբերության և 21-րդ հոդվածի 1.ա և բ պարբերություններով նախատեսված հանցագործությունների հետապնդման նպատակով՝ յուրաքանչյուր Կողմ ձեռնարկում է անհրաժեշտ օրենսդրական կամ այլ միջոցներ՝ ապահովելու համար, որ 1.դ պարբերության նկատմամբ իրավազրկությունը ստորադաս չլինի այն պայմանին, որ գործողությունները քրեականացվում են դրանց կատարման վայրում:
- 5 Յուրաքանչյուր Կողմ ստորագրման պահին կամ վավերացման, ընդունման, հաստատման կամ միանալու մասին փաստաթուղթն ի պահ հանձնելիս կարող է հանդես գալ Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարին ուղղված հայտարարությամբ, որ իրեն իրավունք է վերապահում սահմանափակելու սույն հոդվածի 4-րդ պարբերության կիրառումը 18-րդ հոդվածի 1.բ պարբերության երկրորդ և երրորդ պարբերություններով նախատեսված հանցագործությունների նկատմամբ այն դեպքերում, երբ նրա քաղաքացու բնակության վայրն իր տարածքում է:
- 6 Սույն Կոնվենցիայի 18-րդ, 19-րդ, 20-րդ հոդվածների 1.ա պարբերությունով և 21-րդ հոդվածի 1.ա պարբերությունով նախատեսված հանցագործությունների հետապնդման նպատակով՝ յուրաքանչյուր Կողմ ձեռնարկում է անհրաժեշտ օրենսդրական կամ այլ միջոցներ՝ ապահովելու համար, որ 1.դ պարբերության մասով իրավազրկությունը ստորադաս չլինի այն պայմանին, որ հետապնդումը կարող է նախաձեռնվել տուժողի կողմից կատարված հաղորդման կամ պետության կողմից այն վայրի վերաբերյալ տեղեկություններ տրամադրելուց հետո, որտեղ կատարվել է հանցագործությունը:

- 7 Յուրաքանչյուր Կողմ ձեռնարկում է անհրաժեշտ օրենսդրական կամ այլ միջոցներ՝ սույն Կոնվենցիայով նախատեսված հանցագործություններից որևէ մեկի նկատմամբ իրավագործություն սահմանելու համար, այն դեպքերում, երբ ենթադրյալ հանցագործություն կատարողը գտնվում է իր տարածքում և չի հանձնում նրան մեկ այլ Կողմի՝ միայն նրա քաղաքացիության հիմքով:
- 8 Երբ մեկից ավելի Կողմ է սույն Կոնվենցիայով նախատեսված ենթադրյալ հանցագործության նկատմամբ իր իրավագործության կիրառման պահանջ ներկայացնում, ապա ներգրավված Կողմերը անհրաժեշտության դեպքում խորհրդակցում են միմյանց հետ՝ հետապնդման համար առավել նպատակահարմար իրավասություն որոշելու նպատակով:
- 9 Չխախտելով միջազգային իրավունքի ընդհանուր կանոնները՝ սույն Կոնվենցիան չի բացառում որևէ Կողմի կողմից իր ներպետական իրավունքի համաձայն կիրառվող որևէ քրեական իրավագործություն:

#### **Հոդված 26. Իրավաբանական անձանց պատասխանատվությունը**

- 1 Յուրաքանչյուր Կողմ ձեռնարկում է անհրաժեշտ օրենսդրական կամ այլ միջոցներ՝ ապահովելու համար, որ հնարավոր լինի իրավաբանական անձին պատասխանատվության ենթարկել սույն Կոնվենցիայով սահմանված ցանկացած հանցագործության համար, որը կատարվել է որևէ ֆիզիկական անձի կողմից այդ իրավաբանական անձի օգտին, ով գործել է առանձին կամ որպես իրավաբանական անձի մի մաս և ով տվյալ իրավաբանական անձում զբաղեցնում է բարձր պաշտոն՝ հետևյալի հիման վրա
  - ա) իրավաբանական անձի ներկայացուցչության լիազորության,
  - բ) իրավաբանական անձի անունից որոշումներ կայացնելու լիազորության,
  - գ) իրավաբանական անձում վերահսկողություն իրականացնելու լիազորության:
- 2 1-ին պարբերությունով արդեն իսկ նախատեսված դեպքերից բացի՝ յուրաքանչյուր Կողմ ձեռնարկում է անհրաժեշտ օրենսդրական կամ այլ միջոցներ՝ ապահովելու համար, որ հնարավոր լինի իրավաբանական անձին պատասխանատվության ենթարկել, եթե 1-ին պարբերությունում նշված ֆիզիկական անձի կողմից վերահսկողության կամ հսկողության բացակայությունը հանգեցրել է հանցագործության կատարմանը սույն Կոնվենցիայի համաձայն ֆիզիկական անձի կողմից տվյալ իրավաբանական անձի օգտին՝ գործելով վերջինիս լիազորության ներքո:

- 3 Պահպանելով Կողմի իրավական սկզբունքները՝ իրավաբանական անձը կարող է ենթարկվել քրեական, քաղաքացիական կամ վարչական պատասխանատվության:
- 4 Նման պատասխանատվությունը չպետք է սահմանափակի հանցագործություն կատարած ֆիզիկական անձանց քրեական պատասխանատվության ենթարկելու իրավունքը:

### **Հոդված 27. Պատժամիջոցները և ձեռնարկվող միջոցները**

- 1 Յուրաքանչյուր Կողմ ձեռնարկում է անհրաժեշտ օրենսդրական կամ այլ միջոցներ՝ ապահովելու համար, որ սույն Կոնվենցիայով նախատեսված հանցագործությունների համար նախատեսվեն արդյունավետ, համաչափ և տարհամոզիչ պատժամիջոցներ՝ հաշվի առնելով դրանց լրջությունը: Այդ պատժամիջոցներն ընդգրկում են այնպիսի պատիժներ, ինչպիսիք են՝ ազատազրկումը, որը կարող է հանգեցնել հանձնման:
- 2 Յուրաքանչյուր Կողմ ձեռնարկում է անհրաժեշտ օրենսդրական կամ այլ միջոցներ՝ ապահովելու համար, որ 26-րդ հոդվածի համաձայն պատասխանատվության ենթարկված իրավաբանական անձանց նկատմամբ կիրառվեն արդյունավետ, համաչափ և տարհամոզիչ պատժամիջոցներ՝ ներառյալ քրեական կամ ոչ քրեական դրամական տուժանք, ինչպես նաև այլ միջոցներ, մասնավորապես՝

ա) պետական նպաստներից կամ աջակցությունից զրկելը.

բ) առևտրային գործունեությունից ժամանակավորապես կամ մշտապես որակազրկելը.

գ) դատական վերահսկողության տակ դնելը.

դ) դատական կարգով լուծարման հրամանը:

- 3 Յուրաքանչյուր Կողմ ձեռնարկում է անհրաժեշտ օրենսդրական կամ այլ միջոցներ, որպեսզի

ա) նախատեսի առգրավվում կամ բռնագրավում՝

- ապրանքների, փաստաթղթերի և այլ գործիքների, որոնք օգտագործվել են սույն Կոնվենցիայով նախատեսված հանցագործությունների կատարման կամ դրանց կատարմանն աջակցելու համար.

- նման հանցագործություններից ստացված եկամտի կամ գույքի համար, որի արժեքը համապատասխանում է նման եկամուտներին:
  - բ) հնարավոր դարձնի սույն Կոնվենցիայով նախատեսված հանցագործություններից որևէ մեկի կատարման նպատակով օգտագործվող ցանկացած հաստատության ժամանակավոր կամ մշտական փակումը՝ չխախտելով բարեխղճորեն գործող երրորդ կողմերի իրավունքները, կամ ժամանակավորապես կամ մշտապես մերժի հանցագործություն կատարած անձի կողմից մասնագիտական կամ կամավոր հիմունքներով աշխատանքների իրականացումը՝ ներառյալ երեխաների հետ շփման տարրեր պարունակող գործունեությունը, որի ընթացքում կատարվել է հանցագործությունը:
- 4 Յուրաքանչյուր Կողմ կարող է ընդունել հանցագործություն կատարած անձանց համար այնպիսի միջոցներ, ինչպիսիք են՝ ծնողական իրավունքներից զրկումը կամ դատապարտվածների նկատմամբ հսկողությունը կամ վերահսկողությունը:
- 5 Յուրաքանչյուր Կողմ կարող է սահմանել, որ հանցավոր ճանապարհով ստացված եկամուտները կամ գույքը, որոնք առգրավվել են սույն հոդվածի համաձայն, կարող է հատկացվել հատուկ հիմնադրամի՝ սույն Կոնվենցիայով նախատեսված որևէ հանցագործությունից տուժած անձանց համար կանխարգելման և աջակցության ծրագրերի ֆինանսավորման նպատակով:

## **Հոդված 28. Ծանրացուցիչ հանգամանքները**

Յուրաքանչյուր Կողմ ձեռնարկում է անհրաժեշտ օրենսդրական կամ այլ միջոցներ՝ ապահովելու համար, որ սույն Կոնվենցիայով նախատեսված հանցագործությունների համար պատժամիջոցներ սահմանելիս ներպետական իրավունքի համապատասխան դրույթների համաձայն ծանրացուցիչ կարող են համարվել դեռ հանցագործության բաղկացուցիչ տարրերի մաս չկազմող հետևյալ հանգամանքները՝

- ա) հանցագործությունը լուրջ վնաս է հասցրել տուժողի ֆիզիկական կամ մտավոր առողջությանը.
- բ) հանցագործությանը նախորդել է կամ այն ուղեկցվել է խոշտանգումներով կամ ծանր բռնությամբ.
- գ) հանցագործությունը կատարվել է առանձնապես խոցելի տուժողի նկատմամբ.

դ) հանցագործությունը կատարել է ընտանիքի անդամներից մեկը, երեխայի հետ ապրողը կամ իր դիրքը չարաշահող անձը.

ե) հանցագործությունը կատարվել է հանցակցությամբ.

զ) հանցագործությունը կատարվել է հանցավոր խմբի կողմից.

(է) հանցագործություն կատարած անձը նախկինում դատապարտված է եղել նմանատիպ հանցագործություն կատարելու համար:

### **Հոդված 29. Նախկինում դատապարտված լինելը**

Յուրաքանչյուր Կողմ ձեռնարկում է օրենսդրական կամ այլ միջոցներ, որոնք անհրաժեշտ են պատժամիջոցները սահմանելիս հնարավորություն ընձեռելու հաշվի առնելու սույն Կոնվենցիայով նախատեսված հանցագործությունների կապակցությամբ մեկ այլ Կողմի կայացրած վերջնական դատավճիռները:

## **Գլուխ VII. Նախնական քննությունը, հետապնդումը և դատավարական իրավունքը**

### **Հոդված 30. Սկզբունքները**

- 1 Յուրաքանչյուր Կողմ ձեռնարկում է անհրաժեշտ օրենսդրական կամ այլ միջոցներ՝ ապահովելու համար, որ նախնական քննությունն ու քրեական վարույթն իրականացվեն՝ ելնելով երեխայի շահերից և հարգելով երեխայի իրավունքները:
- 2 Յուրաքանչյուր Կողմ որդեգրում է տուժողի նկատմամբ պաշտպանական մոտեցում՝ ապահովելով, որ քննությունները և քրեական վարույթները չծանրացնեն երեխայի ստացած տրավման և որ անհրաժեշտության դեպքում քրեական արդարադատությունից հետո աջակցություն տրամադրվի:
- 3 Յուրաքանչյուր Կողմ ապահովում է, որ նախնական քննությունն ու քրեական վարույթը դիտվեն որպես գերակայություն և իրականացվեն առանց չհիմնավորված ուշացումների:
- 4 Յուրաքանչյուր Կողմ ապահովում է, որ սույն գլխի ներքո կիրառելի միջոցները չխախտեն պաշտպանության իրավունքները և արդար ու անաչառ վարույթի պահանջները՝ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի 6-րդ հոդվածին համապատասխան:

5 Յուրաքանչյուր Կողմ, ներպետական իրավունքի հիմնարար սկզբունքներին համապատասխան, ձեռնարկում է անհրաժեշտ օրենսդրական կամ այլ միջոցներ՝

- ապահովելու համար սույն Կոնվենցիայով նախատեսված հանցագործությունների նախնական քննությունը և հետապնդումը, անհրաժեշտության դեպքում թույլ տալով գաղտնի օպերացիաների իրականացման հնարավորություն.
- հնարավորության տալու համար բաժանմունքներին կամ քննչական ծառայություններին՝ բացահայտելու 20-րդ հոդվածով նախատեսված հանցագործություններից տուժած անձանց՝ մասնավորապես վերլուծելով մանկական պոռնկագրական նյութերը, ինչպիսիք են՝ լուսանկարները և տեսալսողական ձայնագրությունները, որոնք հեռարձակվել են կամ մատչելի դարձել տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների միջոցով:

### **Հոդված 31. Պաշտպանության ընդհանուր միջոցները**

1 Յուրաքանչյուր Կողմ ձեռնարկում է անհրաժեշտ օրենսդրական կամ այլ միջոցներ՝ պաշտպանելու տուժողների իրավունքներն ու շահերը՝ ներառյալ նրանց հատուկ կարիքները քննության և քրեական դատավարության բոլոր փուլերում, երբ հանդես են գալիս որպես վկաներ, մասնավորապես՝

ա) տեղեկացնելով նրանց իրենց իրավունքների և մատչելի ծառայությունների մասին, և եթե չեն ցանկանում ստանալ նման տեղեկատվություն, ապա նրանց բողոքների ընթացքի, վճարումների և քննության կամ վարույթի ընդհանուր ընթացքի և դրանում նրանց դերի, ինչպես նաև գործերի արդյունքների մասին.

բ) ապահովելով, որ առնվազն այն դեպքերում, երբ տուժողները և նրանց ընտանիքները վտանգի մեջ են, անհրաժեշտության դեպքում տեղեկացվեն, երբ դատապարտված անձը ժամանակավորապես կամ անորոշ ժամկետով ազատվում է.

գ. հնարավորություն տալով նրանց, ներպետական իրավունքի ընթացակարգային կանոնների համաձայն, ցուցմունք տալ, ներկայացնել ապացույցներ և ընտրել իրենց տեսակետները, կարիքները և մտահոգությունները ներկայացնելու եղանակները, որոնք ներկայացվել են ուղղակիորեն կամ միջնորդի միջոցով և ուսումնասիրվել են.

- դ. տրամադրելով նրանց համապատասխան աջակցության ծառայություններ, որպեսզի նրանց իրավունքներն ու շահերը պատշաճ կերպով ներկայացվեն և հաշվի առնվեն.
- ե) պաշտպանելով նրանց անձնական կյանքի անձեռնմխելիությունը, ինքնությունը և կերպարը, ինչպես նաև ներպետական իրավունքի համաձայն ձեռնարկելով միջոցներ՝ կանխարգելելու համար որևէ տեղեկության հանրության շրջանում տարածելը, որը կարող է հանգեցնել նրա բացահայտմանը.
- զ) ապահովելով նրանց, ինչպես նաև նրանց ընտանիքների և նրանց անունից հանդես եկող վկաների անվտանգությունը ահաբեկումից, ճնշումներից և կրկին անգամ վնաս պատճառելուց.
- է) ապահովելով, որ տուժողների և հանցագործություն կատարած անձանց միջև շփումը դատարանում և իրավապահ մարմնի տարածքում տեղի չունենա, եթե այլ բան չեն նախատեսում իրավասու մարմինները՝ ելնելով երեխայի շահերից, կամ երբ նման շփում պահանջվում է նախաքննության կամ վարույթների նպատակներով:
- 2 Յուրաքանչյուր Կողմ ապահովում է, որ իրավասու մարմինների հետ իրենց առաջին շփումից սկսած՝ տուժողներին հասանելի լինի համապատասխան դատական կամ վարչական վարույթների վերաբերյալ տեղեկատվությունը:
- 3 Յուրաքանչյուր Կողմ ապահովում է, որ տուժողները, հատկացված լինելու դեպքում, անվճար հիմունքներով օգտվեն իրավական օգնությունից, եթե հնարավոր է ստանալ քրեական վարույթի կողմերի կարգավիճակ:
- 4 Յուրաքանչյուր Կողմ հնարավորություն է տալիս, որպեսզի դատական մարմինները նշանակեն հատուկ ներկայացուցիչ տուժողի համար, երբ ներպետական իրավունքով տուժողը կարող է ունենալ քրեական վարույթի կողմ լինելու կարգավիճակ, և երբ ծնողական իրավունք ունեցողները զրկվել են նման վարույթներում երեխային ներկայացնելուց՝ նրանց և տուժողի միջև շահերի բախման հետևանքով:
- 5 Յուրաքանչյուր Կողմ, օրենսդրական կամ այլ միջոցների միջոցով, իր ներպետական իրավունքով նախատեսված պայմանների համաձայն, հնարավորություն է տալիս խմբերին, հիմնադրամներին, ընկերակցություններին կամ պետական կամ հասարակական կազմակերպություններին, աջակցելու և (կամ) սատարելու տուժողներին նրանց համաձայնությամբ սույն Կոնվենցիայով նախատեսված հանցագործությունների հետ կապված քրեական վարույթներում:

- 6 Յուրաքանչյուր Կողմ ապահովում է, որ սույն հոդվածի դրույթների համաձայն տուժողներին տեղեկատվությունը տրամադրվի՝ ելնելով նրանց տարիքից և հասունությունից, ինչպես նաև իրենց հասկանալի լեզվով:

### **Հոդված 32. Վարույթ նախաձեռները**

Յուրաքանչյուր Կողմ ձեռնարկում է անհրաժեշտ օրենսդրական կամ այլ միջոցներ՝ ապահովելու համար, որ սույն Կոնվենցիայով նախատեսված հանցագործությունների քննությունը կամ հետապնդումը հիմնված չլինի տուժողի կողմից ներկայացված հաղորդման կամ մեղադրանքի վրա, և որ հնարավոր լինի վարույթները շարունակել, նույնիսկ եթե տուժողը հետ է վերցրել իր ցուցմունքները:

### **Հոդված 33. Վաղեմության ժամկետը**

Յուրաքանչյուր Կողմ ձեռնարկում է անհրաժեշտ օրենսդրական կամ այլ միջոցներ՝ ապահովելու համար, որ 18-րդ, 19-րդ հոդվածների 1.ա և բ պարբերությունով և 21-րդ հոդվածի 1.ա պարբերությունով նախատեսված հանցագործությունների մասով վարույթների նախաձեռնման վաղեմության ժամկետը շարունակվի այնքան ժամանակ, որը բավարար կլինի թույլ տալու վարույթի արդյունավետ նախաձեռնումը տուժողի՝ հասունության տարիքին հասնելուց հետո, և որը համապատասխանում է տվյալ հանցագործության ծանրությանը:

### **Հոդված 34. Քննությունը**

- 1 Յուրաքանչյուր Կողմ ընդունում է այնպիսի միջոցներ, որոնք կարող են անհրաժեշտ լինել՝ ապահովելու համար, որ քննություն իրականացնելու համար պատասխանատու անձինք, ստորաբաժանումները կամ ծառայությունները մասնագիտացած լինեն երեխաների սեռական շահագործման կամ չարաշահման դեմ պայքարի ոլորտում, կամ որ այդ անձինք անցնեն նպատակային վերապատրաստումներ: Նման ստորաբաժանումները կամ ծառայությունները պետք է ունենան համարժեք ֆինանսական ռեսուրսներ:
- 2 Յուրաքանչյուր Կողմ ձեռնարկում է անհրաժեշտ օրենսդրական կամ այլ միջոցներ՝ ապահովելու համար, որ տուժողի իրական տարիքի հետ կապված անորոշությունը չխոչընդոտի քրեական քննություն նախաձեռնելուն:

### **Հոդված 35. Երեխայի հետ հարցազրույցները**

- 1 Յուրաքանչյուր Կողմ ձեռնարկում է անհրաժեշտ օրենսդրական կամ այլ միջոցներ՝ ապահովելու համար, որ

- ա) երեխայի հետ հարցազրույցները տեղի ունենան առանց անհիմն ուշացումների՝ իրավասու մարմիններին փաստերը հայտնելուց հետո.
  - բ) անհրաժեշտության դեպքում երեխայի հետ հարցազրույցներն իրականացվեն այդ նպատակով նախատեսված կամ հարմարեցված վայրում.
  - գ) երեխայի հետ հարցազրույցներն իրականացնեն այդ նպատակով վերապատրաստում անցած մասնագետները.
  - դ) նույն անձինք, հնարավորության և անհրաժեշտության դեպքում, իրականացնեն երեխայի հետ բոլոր հարցազրույցները.
  - ե) հարցազրույցների թիվը հնարավորինս սահմանափակվի այնքանով, որքանով խիստ պահանջվում է քրեական վարույթի նպատակով.
  - զ) երեխային կարող է ուղեկցել նրա օրինական ներկայացուցիչը կամ, անհրաժեշտության դեպքում, իր ընտրությամբ՝ չափահասը, քանի դեռ հիմնավորված որոշում չի կայացվել հակառակի մասին՝ այդ անձի առնչությամբ:
- 2 Յուրաքանչյուր Կողմ ձեռնարկում է անհրաժեշտ օրենսդրական կամ այլ միջոցներ՝ ապահովելու համար, որ տուժողի կամ, անհրաժեշտության դեպքում, վկայություն տվող երեխայի հետ բոլոր հարցազրույցները հնարավոր լինի տեսաձայնագրել, և այդ բոլոր տեսաձայնագրված հարցազրույցները հնարավոր լինի որպես վկայություն ընդունել վարույթի ժամանակ՝ իր ներպետական իրավունքով սահմանված կանոնների համաձայն:
- 3 Եթե տուժողի տարիքը անհայտ է, և հիմքեր կան կարծելու, որ տուժողը երեխա է, կիրառվում են 1-ին և 2-րդ պարբերությունով սահմանված միջոցները՝ մինչև նրա տարիքը պարզելը:

### **Հոդված 36. Քրեական դատարանի վարույթները**

- 1 Յուրաքանչյուր Կողմ, պատշաճ կերպով պահպանելով իրավաբանության ոլորտում մասնագետների անկախությունը կարգավորող կանոնները, ձեռնարկում է անհրաժեշտ օրենսդրական կամ այլ միջոցներ՝ ապահովելու համար, որ երեխաների իրավունքների և երեխաների սեռական շահագործման ու չարաշահումների վերաբերյալ վերապատրաստումները հասանելի լինեն վարույթներում ներգրավված բոլոր անձանց, հատկապես դատավորների, դատախազների և փաստաբանների համար:

- 2 Յուրաքանչյուր Կողմ, իր ներպետական իրավունքով նախատեսված կանոններին համապատասխան, ձեռնարկում է անհրաժեշտ օրենսդրական կամ այլ միջոցներ՝ ապահովելու համար, որ

ա) դատավորը կարողանա կարգադրել, որպեսզի լսումը տեղի ունենա դռնփակ.

բ) տուժողը կարողանա ցուցմունք տալ դատարանում առանց իր ներկայության՝ մասնավորապես համապատասխան հաղորդակցական տեխնոլոգիաների օգտագործման միջոցով:

## **Գլուխ VIII. Տվյալների գրանցումը և պահպանումը**

### **Հոդված 37. Սեռական բնույթի հանցագործությունների համար դատապարտված անձանց վերաբերյալ ազգային տվյալների գրանցումը և պահպանումը**

- 1 Սույն Կոնվենցիայով նախատեսված հանցագործությունների կանխարգելման ու հետապնդման նպատակով՝ յուրաքանչյուր Կողմ ձեռնարկում է անհրաժեշտ օրենսդրական կամ այլ միջոցներ՝ հավաքագրելու և պահպանելու, իր ներպետական իրավունքով նախատեսված անձնական տվյալների և այլ անհրաժեշտ կանոնների ու երաշխիքների վերաբերյալ համապատասխան դրույթների համաձայն, սույն Կոնվենցիայով նախատեսված հանցագործությունները կատարած անձի ինքնության և գենետիկ բնութագրի (ԴՆԹ) վերաբերյալ տվյալները:
- 2 Յուրաքանչյուր Կողմ ստորագրման պահին կամ վավերացման, ընդունման, հաստատման կամ միանալու մասին փաստաթուղթն ի պահ հանձնելիս հաղորդում է Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարին 1–ին պարբերության նպատակներով պատասխանատու ազգային միասնական մարմնի անվանումը և հասցեն:
- 3 Յուրաքանչյուր Կողմ ձեռնարկում է անհրաժեշտ օրենսդրական կամ այլ միջոցներ՝ ապահովելու համար, որ 1–ին պարբերությունում նշված տեղեկատվությունը հնարավոր լինի փոխանցվել մեկ այլ Կողմի իրավասու մարմնին՝ իր ներպետական իրավունքի և համապատասխան միջազգային փաստաթղթերով սահմանված պայմանների համաձայն:

## **Գլուխ IX. Միջազգային համագործակցությունը**

### **Հոդված 38. Միջազգային համագործակցության ընդհանուր սկզբունքները և միջոցները**

- 1 Կողմերը համագործակցում են միմյանց հետ սույն Կոնվենցիայի դրույթների համաձայն, ինչպես նաև միասնական կամ հետադարձ ուժ ունեցող օրենսդրության կամ ներքին օրենքների հիման վրա համաձայնեցված կիրառելի միջազգային ու տարածաշրջանային փաստաթղթերի, կարգավորումների կիրառմամբ՝
  - ա) երեխաների սեռական շահագործումը և չարաշահումը կանխարգելելու և դրանց դեմ պայքարելու նպատակով.
  - բ) տուժողներին պաշտպանելու և աջակցություն տրամադրելու նպատակով.
  - գ) սույն Կոնվենցիայով նախատեսված քննության և վարույթներ իրականացնելու նպատակով:
- 2 Յուրաքանչյուր Կողմ ձեռնարկում է անհրաժեշտ օրենսդրական կամ այլ միջոցներ՝ ապահովելու համար, որ սույն Կոնվենցիայով նախատեսված՝ իր բնակության վայր չհանդիսացող Կողմի տարածքում կատարված հանցագործության տուժողները կարողանան բողոք ներկայացնել իրենց բնակության վայրի պետության համապատասխան մարմիններ:
- 3 Եթե այն Կողմը, որին քրեական գործերով կամ հանձնման հետ կապված հարցերում իրավական օգնության տրամադրումը պայմանավորում է պայմանագրի առկայությամբ, ստանում է իրավական օգնության կամ հանձնման վերաբերյալ հարցում այն Կողմից, որի հետ չունի այդպիսի պայմանագիր, նա կարող է սույն Կոնվենցիան որպես իրավական հիմք ընդունել սույն Կոնվենցիայով նախատեսված հանցագործությունների կապակցությամբ քրեական գործերով կամ հանձնման հետ կապված հարցերում իրավական օգնություն տրամադրելու համար:
- 4 Յուրաքանչյուր Կողմ ձգտում է, համապատասխանության դեպքում, ընդգրկել երեխաների սեռական շահագործման կամ չարաշահման կանխարգելումը կամ դրանց դեմ պայքարը երրորդ պետությունների ուղղված զարգացման աջակցության ծրագրերում:

## **Գլուխ X. Մշտադիտարկման մեխանիզմը**

### **Հոդված 39. Կողմերի կոմիտեն**

- 1 Կողմերի կոմիտեն բաղկացած է սույն Կոնվենցիայի Կողմերի ներկայացուցիչներից:
- 2 Կողմերի կոմիտեի նիստը գումարվում է Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարի կողմից: Կոմիտեի առաջին նիստը տեղի է ունենում սույն Կոնվենցիան ուժի մեջ մտնելուց հետո մեկ տարվա ընթացքում՝ տասներորդ ստորագրողի կողմից վավերացվելուց հետո: Դրա հաջորդ նիստերը գումարվում են Կողմերի առնվազն մեկ երրորդի կամ Գլխավոր քարտուղարի պահանջով:
- 3 Կողմերի կոմիտեն ընդունում է իր ընթացակարգային կանոնները:

### **Հոդված 40. Այլ ներկայացուցիչներ**

- 1 Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովը, Մարդու իրավունքների հարցով հանձնակատարը, Քրեական հարցերով եվրոպական կոմիտեն (ՔՀԵԿ), ինչպես նաև Եվրոպայի խորհրդի համապատասխան մյուս միջկառավարական կոմիտեները յուրաքանչյուրը նշանակում են ներկայացուցիչ Կողմի կոմիտեում:
- 2 Նախարարների կոմիտեն կարող է առաջարկել Եվրոպայի խորհրդի այլ մարմինների՝ նշանակել ներկայացուցիչ Կողմերի կոմիտեում՝ վերջինիս հետ խորհրդակցելուց հետո:
- 3 Քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները, մասնավորապես հասարակական կազմակերպությունները, կարող են ընդգրկվել Կողմերի կոմիտեում որպես դիտորդներ՝ Եվրոպայի խորհրդի համապատասխան կանոններով սահմանված ընթացակարգի համաձայն:
- 4 1-3-րդ պարբերությունների համաձայն նշանակված ներկայացուցիչները մասնակցում են Կողմերի կոմիտեի հանդիպումներին առանց ձայնի իրավունքի:

### **Հոդված 41. Կողմերի կոմիտեի գործառույթները**

- 1 Կողմերի կոմիտեն վերահսկում է սույն Կոնվենցիայի կիրարկումը: Կողմերի կոմիտեի ընթացակարգային կանոններով որոշվում է սույն Կոնվենցիայի կիրարկումը գնահատելու կարգը:

- 2 Կողմերի կոմիտեն նպաստում է տեղեկատվության հավաքագրմանը, վերլուծմանը և տեղեկատվության, փորձի ու լավ գործելակերպի փոխանակմանը պետությունների միջև՝ բարելավելու համար նրանց՝ երեխաների սեռական շահագործումը և չարաշահումը կանխարգելելու և դրանց դեմ պայքարելու կարողությունը:
- 3 Կողմերի կոմիտեն անհրաժեշտության դեպքում նաև.
  - ա) աջակցում է սույն Կոնվենցիայի արդյունավետ կիրառմանն ու կիրարկմանը՝ ներառյալ ցանկացած խնդրի վերհանումը և սույն Կոնվենցիայի ներքո արված հայտարարության կամ վերապահման ազդեցությունները,
  - բ) եզրակացություն է ներկայացնում ցանկացած հարցի վերաբերյալ և նպաստում է իրավական, քաղաքական կան տեխնոլոգիական էական զարգացումների վերաբերյալ տեղեկատվության փոխանակմանը:
- 4 Կողմերի կոմիտեն, սույն հոդվածի համաձայն իր գործառույթների իրականացման հարցում, աջակցում է Եվրոպայի խորհրդի քարտուղարությունը:
- 5 Քրեական հարցերով Եվրոպական կոմիտեն (ՔՀԵԿ) պարբերաբար տեղեկացվում է սույն հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ պարբերություններում նշված գործողությունների վերաբերյալ:

#### **Գլուխ XI. Այլ միջազգային փաստաթղթերին առնչությունը**

**Հոդված 42. Առնչությունը «Երեխայի իրավունքների մասին» Միավորված ազգերի կազմակերպության կոնվենցիային և «Մանկավաճառության, երեխաների մարմնավաճառության և մանկական պոռնոգրաֆիայի մասին» դրա կամընտիր արձանագրությանը**

Սույն Կոնվենցիան չի ազդում «Երեխայի իրավունքների մասին» Միավորված ազգերի կազմակերպության կոնվենցիայի և «Մանկավաճառության, երեխաների մարմնավաճառության և մանկական պոռնոգրաֆիայի մասին» դրա կամընտիր արձանագրության դրույթներից բխող իրավունքների և պարտականությունների վրա և նախատեսված է ամրապնդել դրանց պաշտպանությունը և մշակել ու լրացնել դրանցում սահմանված չափանիշները:

### **Հոդված 43. Այլ միջազգային փաստաթղթերին առնչությունը**

- 1 Սույն Կոնվենցիան չի ազդում այլ միջազգային փաստաթղթերի դրույթներից բխող իրավունքների և պարտականությունների վրա, որոնց Կողմ են հանդիսանում կամ Կողմ կհանդիսանան սույն Կոնվենցիայի Կողմերը, և որոնք պարունակում են սույն Կոնվենցիայով կարգավորվող հարցերի վերաբերյալ դրույթներ և ապահովում են սեռական շահագործումից կամ չարաշահումից տուժած երեխայի պաշտպանության և աջակցության ավելի բարձր մակարդակ:
- 2 Կոնվենցիայի Կողմերը կարող են սույն Կոնվենցիայով կարգավորվող հարցերի վերաբերյալ միմյանց հետ կնքել երկկողմ կամ բազմակողմ համաձայնագրեր՝ Կոնվենցիայի դրույթների լրացման կամ ամրապնդման, կամ դրանում նախատեսված սկզբունքների կիրառման նպատակով:
- 3 Եվրոպական միության անդամ հանդիսացող Կողմերն իրենց փոխհարաբերություններում կիրառում են Համայնքի և Եվրոպական միության կանոնները՝ այնքանով, որքանով Համայնքի կամ Եվրոպական միության կանոնները կարգավորում են համապատասխան խնդրի առարկան կամ կիրառելի են առանձնահատուկ դեպքի համար՝ չհակասելով սույն Կոնվենցիայի առարկային և նպատակին, ինչպես նաև չխախտելով այլ Կողմերի հետ դրա ամբողջական կիրառումը:

Գլուխ XII. Կոնվենցիայում փոփոխություններ կատարելը

### **Հոդված 44. Փոփոխությունները**

- 1 Սույն Կոնվենցիայում որևէ փոփոխություն կատարելու ցանկացած առաջարկ ներկայացվում է Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարին, որն իր հերթին այն փոխանցում է Եվրոպայի խորհրդի անդամներին, ցանկացած ստորագրող կողմին, Կողմ հանդիսացող պետությանը, Եվրոպական համայնքին և այն պետությանը, որին առաջարկվել է ստորագրել սույն Կոնվենցիան 45-րդ հոդվածի 1-ին պարբերության դրույթների համաձայն, և այն պետությանը, որին առաջարկվել է միանալ սույն Կոնվենցիային 46-րդ հոդվածի 1-ին պարբերության դրույթների համաձայն:
- 2 Կողմի ներկայացրած ցանկացած փոփոխության մասին տեղեկացվում է Քրեական հարցերով եվրոպական կոմիտեն (ՔՀԵԿ), որն այդ փոփոխության վերաբերյալ իր եզրակացությունն է ներկայացնում Նախարարների կոմիտե:

- 3 Նախարարների կոմիտեն ուսումնասիրում է առաջարկված փոփոխությունը և ՔՀԵԿ-ի ներկայացրած եզրակացությունը և սույն Կոնվենցիայի Կողմ չհանդիսացող պետությունների հետ խորհրդակցելուց հետո կարող է ընդունել փոփոխությունը:
- 4 Սույն հոդվածի 3-րդ պարբերության համաձայն Նախարարների կոմիտեի ընդունված ցանկացած փոփոխության տեքստ փոխանցվում է Կողմերին՝ ընդունման համար:
- 5 Սույն հոդվածի 3-րդ պարբերության համաձայն ընդունված ցանկացած փոփոխություն ուժի մեջ է մտնում այն օրվանից հետո մեկ ամսվա ընթացքում, երբ բոլոր Կողմերը տեղեկացրել են Գլխավոր քարտուղարին այն ընդունելու մասին:

### **Գլուխ XIII. Եզրափակիչ դրույթներ**

#### **Հոդված 45. Ստորագրումը և ուժի մեջ մտնելը**

- 1 Սույն Կոնվենցիան բաց է ստորագրման համար Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների, անդամ չհանդիսացող պետությունների համար, որոնք մասնակցել են դրա մշակման աշխատանքներին, ինչպես նաև Եվրոպական համայնքի համար:
- 2 Սույն Կոնվենցիան ենթակա է վավերացման, ընդունման կամ հաստատման: Վավերացման, ընդունման կամ հաստատման մասին փաստաթղթերն ի պահ են հանձնվում Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարին:
- 3 Սույն Կոնվենցիան ուժի մեջ է մտնում հինգ ստորագրող կողմերի, ներառյալ առնվազն Եվրոպայի խորհրդի երեք անդամ պետությունների կողմից՝ նախորդ պարբերության դրույթների համաձայն սույն Կոնվենցիայով պարտավորված լինելու վերաբերյալ իրենց համաձայնությունը տալու օրվանից հետո եռամսյա ժամկետին հաջորդող ամսվա առաջին օրը:
- 4 1-ին պարբերությունում նշված որևէ պետության կամ Եվրոպական համայնքի համար, որը դրանից հետո է հայտնում Կոնվենցիայով պարտավորված լինելու վերաբերյալ իր համաձայնությունը, Կոնվենցիան ուժի մեջ է մտնում վավերացման, ընդունման կամ հաստատման մասին փաստաթուղթն ի պահ հանձնելու օրվանից հետո եռամսյա ժամկետին հաջորդող ամսվա առաջին օրը:

#### **Հոդված 46. Կոնվենցիային միանալը**

- 1 Սույն Կոնվենցիան ուժի մեջ մտնելուց հետո Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեն, սույն Կոնվենցիայի Կողմերի հետ խորհրդակցելուց հետո և նրանց միաձայն համաձայնությունն ստանալուց հետո, առաջարկում է Եվրոպայի խորհրդի անդամ չհանդիսացող պետությանը, որը չի մասնակցել Կոնվենցիայի մշակման աշխատանքներին, միանալ սույն Կոնվենցիային՝ Եվրոպայի խորհրդի կանոնադրության 20-դ հոդվածով նախատեսված՝ մեծամասնության կողմից ընդունված որոշմամբ և Նախարարների կոմիտեի նիստերին մասնակցելու իրավունք ունեցող Պայմանավորվող պետությունների ներկայացուցիչների կողմից միաձայն ընդունված որոշմամբ:
- 2 Միացող ցանկացած պետության համար սույն Կոնվենցիան ուժի մեջ է մտնում միանալու մասին փաստաթուղթը Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարին ի պահ հանձնելու օրվանից հետո եռամսյա ժամկետին հաջորդող ամսվա առաջին օրը:

#### **Հոդված 47 – Տարածքային կիրառությունը**

- 1 Յուրաքանչյուր պետություն կամ Եվրոպական համայնքը կարող է ստորագրման պահին կամ վավերացման, ընդունման, հաստատման կամ միանալու մասին փաստաթուղթն ի պահ հանձնելիս նշել այն տարածքը կամ տարածքները, որոնց նկատմամբ կիրառվելու է սույն Կոնվենցիան:
- 2 Յուրաքանչյուր Կողմ կարող է, ցանկացած ավելի ուշ ժամկետում, Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարին ուղղված հայտարարությամբ տարածել սույն Կոնվենցիայի կիրառումը հայտարարության մեջ նշված որևէ այլ տարածքի կամ տարածքների վրա, որոնց միջազգային հարաբերությունների համար պատասխանատու է, կամ որոնց անունից լիազորված է պարտավորություններ ստանձնելու: Նման տարածքի համար սույն Կոնվենցիան ուժի մեջ է մտնում այդպիսի հայտարարությունը Գլխավոր քարտուղարի կողմից ստանալու օրվանից հետո եռամսյա ժամանակահատվածին հաջորդող ամսվա առաջին օրը:
- 3 Նախորդ երկու պարբերությունների համաձայն արված յուրաքանչյուր հայտարարություն կարելի է, այդ հայտարարությունում նշված յուրաքանչյուր տարածքի առնչությամբ, հետ վերցնել՝ Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարին հասցեագրված ծանուցմամբ: Հետ վերցնելն ուժի մեջ է մտնում այդ ծանուցումը Գլխավոր քարտուղարի կողմից ստանալու օրվանից հետո եռամսյա ժամանակահատվածին հաջորդող ամսվա առաջին օրվանից:

## **Հոդված 48 – Վերապահումները**

Բացառությամբ հստակ սահմանված վերապահումների՝ սույն Կոնվենցիայի որևէ դրույթի առնչությամբ այլ վերապահում չի կարող արվել: Ցանկացած վերապահում կարող է հանվել ցանկացած պահի:

## **Հոդված 49. Ջեղյալ հայտարարելը**

- 1 Յուրաքանչյուր Կողմ կարող է, ցանկացած ժամանակ Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարին ուղղված ծանուցման միջոցով, չեղյալ հայտարարել սույն Կոնվենցիան:
- 2 Այդպիսի չեղյալ հայտարարումն ուժի մեջ է մտնում ծանուցումը Գլխավոր քարտուղարի կողմից ստանալու օրվանից հետո եռամսյա ժամանակահատվածին հաջորդող ամսվա առաջին օրը:

## **Հոդված 50 – Ծանուցումը**

Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարը ծանուցում է Եվրոպայի խորհրդի անդամ պետություններին, ցանկացած այլ ստորագրող պետության, Կողմ հանդիսացող ցանկացած պետության, Եվրոպական համայնքին, ցանկացած պետության, որին 45-րդ հոդվածի դրույթներին համապատասխան առաջարկվել է ստորագրել սույն Կոնվենցիան, և ցանկացած պետության, որին Կոնվենցիայի 46-րդ հոդվածի դրույթներին համապատասխան առաջարկվել է միանալ սույն Կոնվենցիայի.

- ա) սույն Կոնվենցիան ստորագրելու ցանկացած դեպքի,
- բ) վավերացման, հաստատման, ընդունման կամ միանալու մասին որևէ փաստաթուղթ ի պահ հանձնելու,
- գ) 45-րդ և 46-րդ հոդվածներին համապատասխան՝ Կոնվենցիան ուժի մեջ մտնելու օրվա,
- դ) 44-րդ հոդվածին համապատասխան ընդունված ցանկացած փոփոխության և այդ փոփոխությունն ուժի մեջ մտնելու օրվա,
- ե) 48-րդ հոդվածի համաձայն արված որևէ վերապահման,
- զ) 49-րդ հոդվածի դրույթների համաձայն արված ցանկացած չեղյալ հայտարարման,
- է) սույն Կոնվենցիային առնչվող ցանկացած այլ ակտի, ծանուցման կամ հայտարարության մասին:

Ի հաստատումն որի՝ ներքոստորագրյալները, պատշաճ կերպով լիազորված լինելով, ստորագրեցին սույն Կոնվենցիան:

Կատարված է Լանգարոտում, 2007 թվականի հոկտեմբերի 25-ին, մեկ բնօրինակով՝ անգլերենով և ֆրանսերենով, ընդ որում՝ երկու տեքստերն էլ հավասարազոր են, որոնք ի պահ են հանձնվում Եվրոպայի խորհրդի արխիվներ: Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարը հաստատված պատճենները փոխանցում է Եվրոպայի խորհրդի յուրաքանչյուր անդամ պետությանը, սույն Կոնվենցիայի մշակման աշխատանքներին մասնակցած անդամ պետություն չհանդիսացող պետություններին, Եվրոպական համայնքին և ցանկացած պետության, որին առաջարկվել է միանալ սույն Կոնվենցիային:

Սույնով հավաստվում է, որ կցված տեքստը 2007թ. հոկտեմբերի 25-ին ստորագրված «Սեռական շահագործումից և սեռական բնույթի բռնություններից երեխաների պաշտպանության մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի հայերեն պաշտոնական թարգմանությունն է:



Հայաստանի Հանրապետության  
արտաքին գործերի նախարարություն